



«ԵՍ ՎԱՏԱՐ ԵՄ, ՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՑՈՒՅՑ ԿՏԱ, ԹԵ ԻՆՉՊԻՍԻՆ ՊԵՏՔ Է ԼԻՆԻ ԿԱՐԳԱՊԱՅՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿԸ», -ասում է Գագիկ Արզումանյանը՝ մատնանշելով

հարկային բարեփոխումների դրական միտումները

-«Վալլեքս Գրուպ» խմբի ընկերությունները Հայաստանի լեռնամետալուրգիայի ոլորտում գործունեություն են ծավալում շղթայի բոլոր օղակներում՝ երկրաբանահետախուզական աշխատանքներից մինչև հանքավայրերի շահագործում...

-Այո, այս առումով մենք միակ խումբն ենք, որը կարող է ապահովել ամբողջական ցիկլի իրականացում՝ երկրաբանահետախուզական աշխատանքներից մինչև նախագծում, շինարարություն և հանքավայրերի շահագործում: Այս պահին մենք բոլոր այդ փուլերն իրականացնում ենք: Խմբում ընդգրկած են չորս հիմնական ընկերություններ՝ «Արմենիան Զափր Փրոգրամ» ընկերությունը շահագործում է Ալավերդու պղնձածածուկարանը, ինչպես նաև տիրապետում է Ալավերդու պղնձի ստորգետնյա հանքի շահագործման լիցենզիային: Երկրորդը «Բեյգ Մեթըլս» ընկերությունն է, որը Լեռնային Ղարաբաղում շահագործում է Դրմբոնի պղինձ-ոսկու հանքավայրը, հարստացուցիչ ֆաբրիկան և միաժամանակ երկրաբանահետախուզական աշխատանքներ է իրականացնում ԼՂ գրեթե ամբողջ տարածքում: Մեր երրորդ ընկերությունը «Լեռնամետալուրգիայի ինստիտուտ» ՓԲԸ-ն է, որը սպասարկում է ճյուղի բոլոր ձեռնարկություններին: «Թեդուտ» ՓԲԸ-ն էլ իրականացնում է Թեդուտի պղինձ-մոլիբդենային հանքավայրի շահագործումը: «Վալլեքս» խմբի ընկերություններում ընդհանուր առմամբ աշխատում է շուրջ 2500 մարդ, իսկ եկամուտը 2009թ.-ի տարեկան արդյունքներով կազմել է 110 մլն դոլար: Եթե հակիրճ բնորոշեմ խմբի գործունեությունն, ապա պետք է ասել, որ խումբն իր աշխատողներով հնարավորություն ունի ցանկացած հանքերնակումում, որ-

տեղ դեռևս չկան հաստատված պաշարներ՝ իրականացնել երկրաբանական համալիր աշխատանքներ, կատարել պաշարների հաշվարկ, ներկայացնել հաստատման, որից հետո իրականացնել լեռնահանքային համալիրի նախագծում, շինարարություն ու շահագործում, իսկ շահագործման ավարտից հետո՝ նաև ռեկուլտիվացում:

-Չնայած ֆինանսական ճգնաժամը վերջնականապես հաղթահարված չէ, սակայն հանքարդյունաբերության ոլորտը կարծես թե ամենադժվար փուլն արդեն անցել է: Չարգացումների ինչպիսի՞ հեռանկարներ եք տեսնում:

-Լեռնահանքային ոլորտում ճգնաժամի միակ ազդեցությունը կարելի է ասել՝ մետաղների գների կտրուկ անկումն էր: Հայաստանից արտահանվող երեք հիմնական մետաղները՝ մոլիբդեն, պղինձ, ոսկի, գների անկում ունեցան, իհարկե, ամենաքիչը ոսկու դեպքում էր, բայց՝ կար: Անցած ժամանակահատվածում ոսկու և պղնձի գները լիարժեք վերականգնվել են: Եթե նախաճգնաժամային ժամանակահատվածում պղնձի գնի պիկը մոտեցել էր մեկ տոննայի դիմաց 9000 դոլարի, ապա այս տարեվերջին դա կազմում էր 8000 դոլար: Հիմա որոշակի անկում կա՝ տոննայի գինը 6500-7000 դոլարի սահմաններում է, սակայն, եթե հաշվի առնենք դոլարի այսօրվա փոխարժեքը, ապա կարող ենք փաստել, որ դրամային արտահայտությամբ պղնձի միջազգային գինն այժմ չի զիջում նախաճգնաժամային մակարդակին: Ոսկու պարագայում դոլարային արտահայտությամբ մենք ունենք անգամ աճ: Եթե մինչև ճգնաժամը ոսկու մեկ տրոյական ունցիայի գինը կազմում էր 850-900 դոլար, իսկ ճգնաժամային փուլում իջավ մոտ 700-750 դոլարի, ապա այժմ ընդ-

հանրապես ռեկորդային մակարդակի է՝ 1250 դոլարի շրջանակներում: Նույնը չի կարելի ասել մոլիբդենի դեպքում, որովհետև մոլիբդենի գինը դոլարային արտահայտությամբ նախաճգնաժամային փուլի մոտ կեսի մակարդակի վրա է: Բայց, ընդհանուր առմամբ, երեք մետաղների գները, միասին վերցրած, այսօր ավելի ցածր չեն, քան մինչ ճգնաժամը: Այսպիսով, իսկապես, կարելի է համարել, որ ոլորտում ճգնաժամը հաղթահարված է: Իհարկե, գործունեության որոշ տեսակներ կան, որոնք, առնվազն տեսանելի ապագայում, անվերադարձելի են: Օրինակ, 2008թ.-ի նոյեմբերին մենք ստիպված եղանք դադարեցնել Ալավերդու ստորգետնյա պղնձի հանքի շահագործումը՝ առաջին հերթին գների անկման պատճառով: Իհարկե, պետք է խոստովանել, որ նույնիսկ ամենաբարձր գների դեպքում հնարավոր չէր զույգ այս հանքի շահագործումը շահութաբեր դարձնել, և այս պահին ևս այդ հեռանկարը տեսանելի չէ:

-Ի՞նչ ծրագրեր կան Ալավերդու պղնձածուլարանի հետ կապված:

-Մենք պարբերաբար քննարկում ենք Ալավերդու պղնձածուլարանի արդիականացման հարցը: Եթե խոսելու լինենք ավանդական տեխնոլոգիաներով արդիականացման մասին, ապա այսօրվա պայմաններում դա մեզ իրատեսական չի թվում մի քանի նկատառումները ելնելով: Նախ՝ արտադրական հզորությունները. այս պահին Հայաստանում արտադրվող պղնձը չի բավարարի մրցուկական գործարանի համար: Այսօր ամբողջ Հայաստանում տարեկան արտադրվում է 25-30 հազար տոննա պղնձ: Հայաստանի առանձնահատուկ գործոններից մեկն էլ այն է, որ աշխարհին կապող տրանսպորտային ուղիները բավակա-

Լին թանկ են, ինչը նպաստավոր գործոն է թվում Հայաստանում պղնձածուլարան ունենալու համար, բայց տարեկան 25-30 հազար արտադրողականության դեպքում շատ կասկածելի է, որ այն իրեն արդարացնի: Հետևաբար, մենք կարծում ենք, որ Թեղուտի հանքավայրի շահագործմամբ առնվազն կկրկնապատկվի Հայաստանում արտադրվող պղնձի քանակը, և կունենանք պղնձածուլարանի արդիականացման ծրագիրը քննարկելու Եական խթան: Այս դեպքում էլ մեկ այլ մտահոգություն է առաջ գալիս. ավանդական արդիական տեխնոլոգիաների կիրառմամբ մենք կունենանք ծծմբաթթվի արտադրություն, և տեսանելի չէ, թե այս պահին Հայաստանում այն որտեղ կարելի է օգտագործել:

Ցավոք, նույն տրանսպորտային ուղիները մեզ թույլ չեն տա մեծ ծավալներով և կայուն ժամանակացույցով ծծմբաթթու մատակարարել արտերկրի որևէ շուկա: Դրա համար մենք պետք է կարողանանք Հայաստանում գտնել այդ շուկան, և այս առումով, որքան էլ զարմանալի թվա, մեր հույսը կրկին Թեղուտն է:

«Չանգեզուրի պղնձամուլիդեենային կոմբինատ»-ը ևս մաքուր պղնձի ստացման ծրագիր ունի, և կարծես թե Ֆինլանդիայում փորձնական գործարան են կառուցել:

-Այն ծրագիրը, որն ունեն Չանգեզուրի մեր գործընկերները, կատարվում է ոչ թե ավանդական եղանակով, այլ նոր՝ դեռևս արդյունաբերական գործածություն չունեցող տեխնոլոգիաների օգտագործմամբ: Այս դեպքում պղնձի խտանյութերը վերամշակվում են ոչ թե ձուլման, այլ հիդրոմետալուրգիական վերամշակման միջոցով, որի արդյունքում ծծմբաթթու չի արտադրվելու: Եթե հաջողվի այդ ծրագիրը, ապա Հայաստանը կլինի առաջին երկիրն ամբողջ աշխարհում, որը կկարողանա արդյունաբերական կիրառություն տալ այդ տեխնոլոգիային:

-Անդրադառնանք Թեղուտի արդյունաբերական և բնապահպանական խնդիրներին: Ի՞նչ է արվում այստեղ:

-Հանքավայրի շահագործման ծրագիրն ինչ-որ չափով տուժեց ճգնաժամից, որովհետև չնայած այն համաժամանակին, որ 2008թ. մայիսին ՎՏԲ բանկի հետ ստորագրվեց շուրջ 250 մլն դոլարի վարկային պայմանագիր, վարկի տրամադրումն այդպես էլ տեղի չունեցավ, քանի որ դրան անմիջապես հաջորդեց գների կտրուկ անկումն ու դրա արդյունքում, բանկի տեսանկյունից, ծրագրի ռիսկայնության ավելացումը: Չնայած այդ հանգամանքին, անցած ամբողջ ժամանակահատվածում Թեղուտում չեն դադարել աշխատանքները, և մեր ներքին ռեսուրսների հաշվին բավականին լայնածավալ աշխատանքներ ենք իրականացրել: Բնապահպանական տեսանկյունից հնչած խնդիրների առումով ասեմ, որ մեր պարտավորությունների կատարմանը հետևելու հրապարակային հրավերներ ենք ուղարկել բոլոր

բնապահպանական կազմակերպություններին, որպեսզի նրանք մասնակցեն մոնիտորինգին: Չնայած չէի ասի, թե մեծ արձագանք է գտել մեր հրավերը, բայց մենք փորձում ենք իրականացնել մեր ստանձնած պարտավորությունները: Ամենացավոտ խնդիրն, իհարկե, անտառահատումներն են, քանի որ դեռևս այդպիսի ծրագիր չի եղել, որի իրականացումը Հայաստանում պահանջի այնպիսի լայնամասշտաբ անտառահատում, ինչպիսին այս դեպքում է՝ խոսքը գնում է ծրագրի իրականացման ամբողջ ժամանակահատվածում 357 հա ծառահատումներ իրականացնելու մասին: Մեր ստանձնած անսխառեպ պարտավորության համաձայն՝ հատված յուրաքանչյուր հեկտարի դիմաց ծառատունկ ենք կատարում երկու հեկտար տարածքում և ապահովում համապատասխան խնամք ու պահպանություն՝ մինչև այդ տարածքներն անտառի կատեգորիա տեղափոխելը: Խոսքը գնում է առնվազն 5-6 տարվա խնամքի մասին: Անցած երկու տարվա ընթացքում՝ 2008-2009թթ.-ին հաստատված ժամանակացույցի համաձայն հատվել է 45 հա տարածք, բայց ծառատունկ իրականացվել է 107 հա-ի վրա: Ընդ որում, դա կատարվում է հենց մերձակա տարածքներում: 107 հա ծառատունկի շուրջ կեսն իրականացվել է Թեղուտ և Շնող համայնքների տարածքում: Եթե մերձակա համայնքների կողմից հատկացված տարածքները չեն բավարարում՝ ընտրում ենք մարզի այլ համայնքներ՝ իրենց իսկ առաջարկությամբ: Այդ նպատակով մենք 2009թ.-ին դիմել ենք Լոռու մարզպետարանին և արդեն 72 հա-ի վերաբերյալ առաջարկություն ենք ստացել Լեռնահովիտ համայնքից, որտեղ այս պահին բավականին լայնածավալ անտառապատման աշխատանքներ են իրականացվում: Իսկ ինչ վերաբերում է մնացած պատարավորություններին, ապա բնապահպանական պատավորությունների առումով որևէ շեղում չի լինելու, և 3-4 տարի հետո կունենանք աշխատող Լեռնահանքային համալիր Թեղուտում, որը կարող ենք ներկայացնել բնապահպանական տեսանկյունից որպես օրինակելի ծրագիր:



-Ինչպես ուղորտի բոլոր ձեռնարկություններն, այնպես էլ Ձերը միշտ էկոլոգների ուշադրության կենտրոնում է: Երբևէ հնարավոր է տնտեսական և բնապահպանական շահերը հավասարակշռել...

-Շատ ցավոտ հարցադրում է: Պետք է ասեմ, որ ի տարբերություն Թեղուտի, որտեղ մենք ձեռնարկում ենք բնապահպանական առումով առավելագույն անվտանգության միջոցառումներ, որպեսզի ազդեցությունը շրջակա միջավայրի վրա լինի նվազագույնը, Ալավերդու պարագայում այլ է վիճակը: Այո, այստեղ մենք ունենք բնապահպանական խնդիրներ և գաղտնիք չէ, որ արտանետումների թույլատրելի սորմերը մի քանի անգամ գերազանցվում են: Այս խնդրի երկարաժամկետ լուծումը մեկն է՝ կամ Ալավերդիում չպետք է լինի պղնձածուլարան, կամ պետք է լինի արդիական ձուլարան: Մենք հասկանում ենք, որ այն պղնձածուլարանը, որն այսօր գործում է Ալավերդիում, երկարաժամկետ հեռանկարում կենսունակ չէ: Միաժամանակ չեմ կարող ասել, թե այդ պղնձածուլարանը մեր խմբի ընկերությունների համար շահույթի, եկամտի էական աղբյուր է հանդիսանում: Հիմնական պատճառը տնտեսական չէ, այլ՝ սոցիալական, որովհետև այն հիմնականում զբաղվածության հարց է լուծում: Իհարկե, դա որևէ կերպ չի կարող արդարացնել, որ ձեռնարկությունը շարունակի աշխատել այնպես, ինչպես հիմա: Մյուս կողմից, ինչպես արդեն նշեցի, խնդիրներ ունենք արդիական պղնձածուլարան ունենալու հարցում: Այժմ գտել ենք միջանկյալ լուծում, և օրերս այդ առաջարկը ներկայացրել ենք բնապահպանության նախարարություն: Դա վերաբերում է պղնձածուլարանի ծխնելույզն ավելի բարձր գոտում տեղադրելու շնորհիվ գազերի ցրումն անհամեմատ արդյունավետ դարձնելու հնարավորությանը՝ բազմապատիկ /սույնիսկ՝ տասնյակ/ անգամ կնվազի Ալավերդի քաղաքի վրա պղնձածուլարանի բնապահպանական ազդեցությունը: Եթե նախարարությունում մեր հաշվարկները հաստատվեն, ապա դա կպահանջի առնվազն 1 մլն ԱՄՆ դոլարի ներդրում, և գոնե միջնաժամկետ հեռանկարում նվազեցնելով բնապահ-

պանական ազդեցությունը՝ թույլ կտա շարունակել գործունեությունը:

-Այսօր Հայաստանում մտահոգիչ է ուրանի խնդիրը:

-Թեև շատ նեղ ինֆորմացիայի չեմ տիրապետում, բայց այս փուլում, երբ կարծես թե երկրաբանահետախուզական աշխատանքներ են կատարվում, որևէ խնդիր չպետք է լինի, քանի որ աշխարհի ամենաառաջատար երկրները, որոնք բնապահպանական տեսանկյունից կարող են օրինակ հանդիսանալ, ունեն ուրանի արդյունահանում: Այսինքն, այնպես չէ, որ դա արդյունահանվում է հետամնաց երկրներում: Միացյալ Նահանգների, Կանադայի, Ավստրալիայի օրինակը ցույց է տալիս, որ հնարավոր է ուրան արդյունահանել բնապահպանական տեսանկյունից անվտանգ եղանակներով: Պետք չէ ի սկզբանե մտածել, որ մեզ մոտ ամեն ինչ շատ վատ է կատարվելու և արվելու է բնությանն առավելագույն վնաս հասցնելով: Նույն Թեղուտի տարածքում մեզ ասում էին, թե տեսք՝ մյուս պոչամբարներն ինչպես են աշխատում: Բայց ես հակափաստարկ եմ բերում, եթե հանցագործ կա երկրում, դա չի նշանակում, որ պետք է արգելել ծնունդները, որովհետև վտանգ կա, որ կարող են նաև հանցագործներ ծնվել: Իսկ մեր ուղորտից կնշեմ Դրմբոնը, որը բնապահպանական տեսանկյունից, նաև շատ բնապահպանների կարծիքով, օրինակելի է...

-Կառավարության վարած տնտեսական և, մասնավորապես, հարկային քաղաքականության Ձեր գնահատականը:

-Եթե ավելի կոնկրետ խոսենք, ապա ԱԱՀ-ի գերավճարների վերադարձի առումով էական, նույնիսկ՝ աննախադեպ առաջընթաց կա: Անկեղծ խոստովանեմ, անցած տարեսկզբին, երբ ճգնաժամի առաջին հարվածը ստիպեց կառավարությանը բյուջեում փոփոխություններ անել՝ վերանայել բյուջեի եռամսյակային բաշխումը և, մասնավորապես, գերավճարների վերադարձի ծախսային հոդվածն ամբողջովին տեղափոխվեց 4-րդ եռամսյակ, ես լավատեսական սպասելիքներ չունեի: Սակայն,



Թեղուտի հանքավայրի շահագործմամբ առնվազն կերկնապատկվի Հայաստանում արտադրվող պղնձի քանակը, և կունենանք պղնձածուլարանի արդիականացման ծրագիրը քննարկելու էական խթան:

չնայած ճգնաժամային իրավիճակին, այս ամբողջ ժամանակահատվածում գերավճարների ուսումնասիրված գումարները գրեթե ամբողջությամբ վերադարձվել են: Վերջին երկու ամիսներին որոշակի շեղում ունենք, բայց հուսով եմ, որ դա կարճաժամկետ խնդիրներով է պայմանավորված: Ունենք երկարաժամկետ հավաստիացումներ, որ կառավարությունը կստանձնի գերավճարների վերադարձի ժամկետների խախտման համար ֆինանսական պատասխանատվություն: Արդեն կա օրենքի նախագիծ և, իհարկե, ցավալի կլինի, եթե պարզվի, որ այդ նախագծով կառավարության վճարելիք տույժի տոկոսն ավելի ցածր է, քան պահանջվում է հարկատուից՝ հարկերի վճարումներն ուշացնելու համար /ներկայում հարկ վճարողը հարկի վճարումն ուշացնելու համար վճարում է տույժ՝ տարեկան մոտ 55 տոկոսի չափով/: Ընդհանուր առմամբ, համակարգում բարեփոխումների դրական միտումներ կան, իսկ հետագա անելիքների առումով՝ պատրաստակամություն: Հարկային քաղաքականությանը վերաբերող մի քանի սկզբունքային հարցերի շուրջ կառավարության հետ եղել են քննարկումներ, և ես հույս ունեմ, որ դրանց արդյունքում ձեռք բերված պայմանավորվածությունների կենսագործումը ամենամոտ ապագայի խնդիր է: